



ԲԱԶՄԱՎԷՊ

ԺԶ ՏԱՐԻ, ԹԻԻ 6.

1858

ՅՈՒՆԻՍ 1.

ԲԱՐՈՅԱԿԱՆՔ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Գ.

Տանտիկիւնը : — Կենիկ մարդ :

Նախընթաց հատուածին մէջ՝ գերդաստանի մը գլխոյն, էրիկ մարդուն վրայ խօսեցանք. իսկ հիմա պիտի խօսինք թէ ինչ տեղ կը գրաւէ ընտանեաց մէջ կնիկ մարդը՝ իբրեւ տանտիկին և իբրեւ էրիկ մարդուն ընկեր : Օտո գլխով պիտի խօսինք Տօր և Սօր, և անոնց յարաբերութեանց վրայ առ որդիս :

Թէպէտ և գերդաստանին գլխաւորութիւնը էրիկ մարդուն վրայ է, և անոր ընդհանուր տեսչութեան վրայ հսկելը՝ իր պարտքն է, սակայն տարակոյս չկայ որ այն իշխանութիւնն ալ սահման մը ունի. վասն զի կինն ալ գերդաստանի մէջ իր անմիջական իշխանութիւնն ունի, ու գրեթէ բացարձակ կարողութիւն մը : Կնիկ մարդուն

վերաբերած այս իշխանութիւնը՝ Տնայտութիւն կամ Տան խնամակալութիւն կ'ըսուի : — Այս բառին վրայ՝ շատերն այլ և այլ կարծիք ունին : Աման զի ոմանք ցած և անարգ զբաղմունք մը կը համարին տնտեսութիւնը, կնիկ մարդուն խնամոցը անարժան, և աղախնայց ձեռք ձգելու բան մը. ոմանք ալ՝ հարկ, բայց նուաստ հարկ մը կը սեպեն, ուրուն պէտք է որ ետեւէ ըլլայ կնիկ մարդը, չկրնալով ուրիշ կերպով գործել. կամ պարտք մը, սակայն տխուր, ձանձրացուցիչ և ցուրտ պարտք մը. և վերջապէս պարտք մը՝ զոր սիրելով, ախորժանօք և մտադիւրութեամբ պէտք է կատարել :

Այսչափ զանազան կարծեաց մէջ արդեօք ո՞րն է ճշմարիտը : Առաջինը

խելքէ մտքէ դուրս բան մըն է . վասն զի առտնին տեսչութիւն մը ամենա-
հարկաւոր է , և գերդաստանին շահը
այս բանս կը պահանջէ : Ինչո՞ւնայն
ջանք մըն է որ ընտանեաց գլխաւոր շա-
հերը արտաքսապէս էրկանը ձեռքով
պաշտպանուին , մինչդեռ ներքուստ ան-
կարգ տնտեսութիւն մը ըլլայ : Բայց
այս ներքին հոգերը արդեօք որո՞ւն կը
վերաբերին : Երիկ մարդուն չվերաբե-
րելուն վրայ տարակոյս չկայ . իրեն՝
գերդաստանէն դուրս ունեցած աշխա-
տանքը և ընդհանուր հսկողութիւնը
քիչ բան չէ . և դժնդակ բեռ մը աւել-
ցնել կ'ըլլար՝ ամենօրեայ կենաց բիւր-
ազգի հոգն ալ վրան դնելով . թող որ
այդ բանին յարմարութիւն չունի , և
եթէ տնտեսութիւնը՝ կնկան ուժէն
վեր բան է , ալ աւելի մեծ պատճառ-
ներու համար՝ էրկանը կարողութենէն
վեր է :

Տնտեսութիւնը՝ էրկանը պարտքը
չէ . և թէ որ կնկանն ալ չէ , ապա ո-
րո՞ւն կը վերաբերի : Հարկ չկայ ըսել-
նիս որ տղայոց չվերաբերիր : Ար մնան
ծառայքը : Բայց ո՞վ կրնայ գերդաստա-
նի մը բարօրութիւնը ծառայի ձեռք
յանձնել , վստահանալով անոր խել-
քին , յարմարութեանը և հաւատար-
մութեան վրայ . արդեօք ասանկ ան-
ստոյգ դիպուածի մը իրենքգիրենք յան-
ձնելու համար է՝ որ էրիկ մարդը ինք-
զինքը կնոջ նուիրած է , և երկուքը
մէկէն յանձն առած են կեանք տալ ի-
րենց որդւոցը :

Եւրա ուրեմն տնտեսութիւնը՝ կնկան
համար էական պարտք մըն է . բայց
արդեօք այս հարկը նուաստացուցիչ և
ծառայական բան մըն է , յորմէ ազա-
տելու համար՝ անկարողութիւնը առաջ
բերէ : Եւրի կ'երեւնայ թէ այս լուծը
ծառայական բան մը ընողն ինքն է ,
երբոր իրբն բռնադատեալ բան մը վրան
առնու . ինքն է՝ ինքզինքը ազախնու-
թեան աստիճանին խոնարհեցընողը՝
երբոր անոնց վիճակին արժանի կերպ
մը ինքիր վրայ երեցընէ : Եւսանկով
տնտեսութեան մէջ երևցած նուաստու-

թիւնը բոլորովին կամաւոր բան մը կ'ըլ-
լայ : Եւրիայն եթէ տնտեսութիւնը՝
կնկան համար հարկ մըն է , միանգա-
մայն նաև պարտք է . վասն զի իւրա-
քանչիւր ոք պարտկան է գործել այն
բանը՝ զոր իր տեղը ուրիշ մը չկրնար
գործել . և հարկը՝ երբոր պարտուց կեր-
պարանք կ'առնու , ալ անկէ ետքը ան-
ձնասիրութեան դէմ չելլեր . անբանա-
կան օրէնք մը չէ , որուն պէտք է գլուխ
ծռնք , չկրնալով ուրիշ կերպով գոր-
ծել . այլ բանական օրէնք մը՝ որուն
բանական ըլլալուն համար կը հնա-
զանդինք :

Եւրդ տնտեսութիւնը պարտք մըն է .
բայց արդեօք այնպիսի՞ պարտք մը՝ զոր
բաւական է պարզաբար կատարելը , ա-
ռանց ջանալու սիրով և ուրախութեամբ
կատարել . և առանց սիրոյ և յօժարու-
թեան կատարուած պարտք մը՝ արդեօք
լաւ կերպով կատարուած է : Երբոր
մէկը միայն իր պարտքը կատարելու ջա-
նայ , արդեօք լաւ կը կատարէ՞ այն
պարտքը . և երբոր սէր և յօժարու-
թիւն չըլլայ , արդեօք պարտքէն զատ
բան կը կատարուի : Եւրիստոտէլ , թէ
հնոց և թէ նորոց մէջ արժանապէս
մեծ բարոյախօս սեպուած անձը , ա-
ռաքինի մարդը կը սահմանէ թէ Եւրա-
քինի կ'ըսուի այն՝ որ հաճոյք կը զգայ
այլոց բարի գործք մը ընելով : Եւս
սահմանս վարդապետականին մէջ կըը-
նայ մեծապէս յարմար գալ . իսկ գործ-
նականին մէջ ամենահարկաւոր է : Տըն-
տեսութիւնը՝ կնկան համար հաճոյա-
կան պարտք մը պիտի ըլլայ . հաճոյք
պիտի զգայ գործելուն , և մտադիւր
փութով անոնց ետեւէն ըլլայ . և բնու-
թիւնը՝ կարծես թէ մասնաւորապէս
զինքն այս բանին համար ստեղծած է :
Եւրա է որ խնայողութիւնը՝ ցած և
հասարակ առաքինութիւն մը կը թուի .
ունեցած բանի մը համար ամենեւին
չպարծիր , այլ մանաւանդ թէ չունենա-
լուն վրայ կը պարծենայ . և սակայն՝
եթէ խնայողութեամբ իր էրկանը աշ-
խատանաց և օրերուն խնայելով՝ անով
ապրուստ մը ճարէ իր որդւոցը , թէ

որ խնայողութեամբ իր գերդաստանին պատիւը պահելու կը ջանայ, գիւցաղնական առաքինութիւն մը կ'ըլլայ խնայողութիւնը :

Կարգը և կանոնը՝ ցուրտ և աննշան առաքինութիւն մը կը սեպուի . սակայն տնտեսութեան մը մէջ կարգը թէ որ բոլորովին երջանկութիւնն ալ չէ, անոր մէկ գլխաւոր մասն է . թէ որ իմաստութիւն ալ չէ, իմաստութեան հարկաւոր պայմաններէն մէկը : Եւս գերդաստանին մէջ՝ ուր աւելի կարգ ու կանոն կայ, հոն աւելի միութիւն և խաղաղութիւն կը տեսնուի :

Երբքին տնտեսութեան մը մէջ՝ հարկ չէ որ կնիկ մարդը միայն այս ցամաք կարծուած առաքինութիւնքը գործածէ . կրնայ, մանաւանդ թէ պարտքի ալ է, ըստ ժամանակին ախորժակ, վայելչութիւն և մեծութիւն գործածել : Խնայողութիւնն ու ճոխութիւնը կարծես թէ իրարու հակառակ բաներ կ'երևնան . բայց ասիկայ անոնց համար է՝ որ ամէն բան իրարմէ կը բաժնեն, և նիւթական իրաց՝ հոգեկաններուն հետ ունեցած ծածուկ վերաբերութիւնները չեն կրնար նկատել : Օգած մանց մէկ շնչով՝ ամէն բան կ'ոգեւորի և կը զարդարուի : Բռնին կենաց ամենէն աւելի նուաստ կարծուած ինքն մոց մէջ՝ կրնայ անանկ արուեստ մը մըտնել, որ առանց աչաց անհաճոյ երևնալու, և առանց մեծ ծախքի մը ամէն բան կարգի կը մտնէ : Կենաց մեծ վայելչութիւնը՝ բարոյականի գէմելլող բան մը չէ, երբոր բաղգին մեզի տուած միջոցներուն հետ անհամեմատ չըլլայ : Սիւթէ նոյն իսկ անզարդ կարծուած բնութիւնը մեծավայելչ չէ . միւթէ ամենէն աւելի խեղճ ծաղկանն ալ այն պիտի փառք մը տրուած չէ, զոր և ոչ Սուրուն իր ամէն փառացը մէջ ունեցաւ :

Ֆենելոն իր Յաղագս Դաստիարակութեան Աղջկանց կոչուած սքանչելի ճառին մէջ՝ Սուրբ Գրքէն ժիր և աշխատասէր կնիկան մը օրինակ մէջ կը բերէ, զոր հոս ալ երկրորդելը անօգուտ չենք համարիր . “ Խելացի ու աշխատասէր կին

մը որ գտնուի՝ աղնիւ քարերէն ալ աւելի պատուական է : Երկանը սիրտը անոր վրայ վստահ է, և ոչ երբեք առանց աւարի տուն կը դառնայ : Ըմենայն աղէկութեան մէջ իր երկանը միշտ գործակից կ'ըլլայ, ու ոչ երբեք չարիք կը գործէ : Բուրդ ու կտաւ կը գտնէ, իր ձեռքովը կը բանի գեղեցիկ բաներ կը շինէ, ու վաճառականի նաւու մը պէս հեռաւոր տեղերէ գանձեր կը ժողովէ : Բաւօտանց կանուխ կ'ելլէ, ընտանեացը կերակուր՝ աղախիններուն ալ աշխատանք կը բաժնէ : Գեղեցիկ արտ մը որ տեսնէ՝ կը գնէ, ու իր ձեռքին արդիւնքովը ան երկիրը կը լեցնէ : Մէջքը գօտի կապած, թւերը սօթ տած կ'աշխատի, վասն զի աշխատանքին անուշ համը առեր է . իր ճրագը բոլոր գիշերը կը վառի ու չմարի : Զեռքը անդադար աշխատութեան հետ է, մատուրներն ալ առանց ձանձրանալու իրիկ կը դարձնեն : Զեռքը բաց է աղքատաց ողորմութիւն տալու, և իրեն արդիւնքէն տնանկին ալ բաժին կը հանէ : Երիկը դուրս տեղ մը ուշանալու ալ ըլլայ՝ տանը համար ամենէն հոգ չընէր : Բոլոր իր տնեցիքը երկերկու ձեռք հագուստ ունին : Երկանը համար աղնիւ ու բարակ կտաւ և ծիրանի պատրաստեր է, իրեն համար ալ վերարկուներ : Ըմենքը մատով կը ցուցնեն անոր երիկը դռներուն մէջ, այսինքն երբոր իր երկիրն ծերերուն և ուրիշ պատուաւոր բնակիչներուն հետ ժողովքի նստած ըլլայ : Կտաներ գործեր ու վերարկուներ շինէր՝ Բանանացոց կը ծախէ : Բերանը չափով ու խելացի խօսքերով կը բանայ, խօսքերուն մէջն ալ գեղեցիկ կարգ մը դրած է : Ոյժն ու մեծ վայելչութիւնը իրեն հագուստի պէս եղած են, ու կենացը ետքի օրերը ուրախ պիտի ըլլայ : Իր տանը ամէն ճամբաներն ալ զոց ու զգուշաւոր են, և պարաս կենալով ոչ երբեք հաց կ'ուտէ : Իրած ողորմութիւններովը զաւկները աղէկ կը մեծնան . երիկն ալ կը դովէ զինքն ու կ'ըսէ . “ Դատ աղջիկներ հարստութիւն գիղեր՝ ու մեծ

ցեր են, բայց դու ամենէն ալ վեր ան-
ցար: Փութ զարդարանք ու սուտ գե-
ղեցկութիւն չկայ վրադ. վասն զի խե-
լացի ու բարեպաշտ կիներ օրհնենք կը
լսէ, ինչպէս որ ինքն ալ երկիւղած մար-
դիկը կը գովէ: Իր շրթանց պտուղը
տուէք իրեն, ու էրիկն ալ դռներուն
մէջ գովեցէք. վասն զի ամէն բանի
մէջ էրիկը կնոջը ճամբայ պիտի ցուցը-
նէ, և ինչուան ետքը յաջողութիւն պի-
տի գտնեն¹:

Տնական կառավարութեան գլխաւոր
բաներէն մէկն ալ ծառայից վրայ հսկո-
ղութիւնն է. դժուարին ու ծանր պաշ-
տօն մը, և իմաստուն կնկան՝ ամենայն
փութոյն արժանաւոր: Երկու բանով
կ'ըլլայ ասիկայ. ընթրութեամբ և քեսութե-
ամբ: Ընթրելը գիտեն թէ տան մը
համար որչափ հարկաւոր է ծառայից
ընտրութիւնը. վասն զի ընդհանրապէս
իրենք են մանր մունր ծախքեր ընողը,
ու կերպով մը տանը գանձը ձեռու-
նին է: Իրաւ է որ ամենամեծ անհա-
ւատարմութիւնք այնչափ յաճախ չեն.
սակայն չափաւոր հարստութիւն ունե-
ցող գերդաստանի մը համար՝ մեծապէս
փնասակար են նաև փոքր անհաւատար-
մութիւնք և անհոգութիւնները: Բայց
ասիկայ՝ ծառայից որ և իցէ տնտեսու-
թեան մէջ ունեցած ազդեցութեանը
փոքրիկ մասն է. գլխաւոր ու ծանր բա-
նը՝ անոնց տղայոց հետ ունեցած ընտա-
նութիւնն է: Տղաք ընդհանրապէս կը
սիրեն զծառայս, վասն զի կը տեսնեն
որ անոնց ձեռքով կամքերնին կը կա-
տարուի: Բայս պատճառաւ՝ ծառայն
գերդաստանի մը մէջ մասնաւոր մտա-
դրութեան արժանաւոր տեղ զրաւած
է. ուստի ամէն ջանք ընելու է՝ որ ի-
րենց հաւատարմութեան և բարեկր-
թութեան վրայ ամենայն վստահու-
թիւն ունենալէն ետքը՝ գերդաստանի
մը մէջ մտցուին:

Տանտիկնոջ կ'իյնայ ծառայից ընտրու-
թեան հոգը: Բայց աղէկ ծառայ ըն-
տրելու արուեստը գիտնալը ամենեւին

բանի չգար, եթէ մէկը անոնց վրայ
աչք ունենալու և զանոնք կառավարե-
լու կերպը չգիտնայ: Դժուարին ա-
րուեստ մըն է ասիկայ, և ամենուն
տրուած չէ: Տարակոյս չկայ որ տան-
տիկնոջ աչքը միշտ բաց ըլլալու է.
բայց պէտք է գիտնայ թէ որ և իցէ
մարդ՝ աղէկ գործելը չկրնար սորվիլ՝
եթէ իրեն մասնաւոր ազատութիւն մը
չտաս: Բռնին իմաստուն տեսչութեան
երկու գլխաւոր սկզբունքը պիտի ըլլան
արխութեան և խառնութեան: Բռնաց
առջինին՝ միշտ խաբուած է. և առանց
երկրորդին՝ ինքզինքը կը խաբէ, ու ծա-
ռայէն կը վերցընէ անոր գործունէու-
թիւնը, երաշխաւորութիւնը և պատիւը:

Բայց տանտիկին մը որչափ ալ իմաս-
տութիւն և փոյթ բանեցընէ ծառայից
ընտրութեան և զանոնք կառավարելու
համար, պէտք չէ ամենեւին մոռնայ այս
ամենահարկաւոր սկզբունքը՝ թէ այդ
մարդիկը թէպէտ խոնարհ և ցած վի-
ճակի մէջ, սակայն մարդկային և խո-
հուն արարածք են, որոնց հետ անու-
շութեամբ և մեծարանօք վարուելու
է: Եթեապէս կ'անիրաւին այն կանայք,
որ չեն ուզեր ծառայից պակսութեանցը
համբերել. չեն ուզեր հասկընալ թէ
նոյն իսկ դաստիարակութեան նուաստու-
թիւնը՝ սխալ գաղափարաց աղբիւր մըն
է, որուն հետեւանքը՝ անոնց բարուցը
մէջ ալ պիտի երևնայ: Շատերը կը
կարծեն թէ ծառայից աղէկ յատկութիւ-
նք անոնց մէկ պարտքն է, որուն շահը
կ'ընդունինք. իսկ պակսութիւններնուն
համար իրաւունք ունինք անդադար
յանդիմանելու զիրենք: Շատերուն
անանկ կ'երևնայ թէ ծառայից աշխա-
տանքը դիւրին բան մըն է. և թէ ինչ-
պէս դիւրին է տերանց ամէն կարգէ
դուրս հաճոյք, ասանկ ալ դիւրին նաև
ծառայից զանոնք զուշակել, և միշտ
գոհ ընելու աշխատիլ: Եսիկայ ամենա-
մեծ սխալ է. և համոզուելու համար
բաւական է որ իւրաքանչիւր մարդ ինք-
զինքը քննէ թէ արդեօք վրան դրուած
ամէն պարտքերը ճշդիւ և ըստ արժա-
նոյն կը կատարէ:

¹ Գիրք Առակայ Գլ. ԼԵ. 10-31:

Պէտք է խոստովանինք թէ մեր ժա-
մանակաց ընկերական վիճակը այնչափ
նպաստաւոր չէ ծառայից համար : Այ-
լի ատենները՝ ծառայ և հպարտի բա-
ռերը՝ իրարմէ այնչափ հեռու նշանա-
կութիւն չունենին . և ՚ի սկզբան՝ ինքն
խոհ հպատակը՝ միանգամայն ծառայ էր :
Գերդաստանին մասը կը սեպուէր նաև
ինքը . տիրուրտօցը հետ սեղանի կը
նստէր , և ընկերական խօսակցութեց
մէջ ինքն ալ կը մտնէր : Բայց երբոր
ծառան ազատ մարդ եղաւ , ալ անկէ
ետքը իր տեղը խոհակերօցը և նախա-
սենեակը սեպուեցաւ . գերդաստանին
մաս չսեպուիր ինքը , և կարծես թէ
տերանց և ծառայից մէջ խուլ և ան-
ձայն կռիւ մը կայ . տետք ամբարտա-
ւան են , ծառայք ալ անհաւատարիմ .
հայրական կերպ մը և որդիական սէր
չտեսնուիր փոխադարձաբար . այլ ցուրտ
գործունէութիւն մը , որուն ինչպէս
ձևանալը՝ ասանկ ալ քայքայիլը ամե-
նադիւրին է . — ասիկայ է ահաւասիկ
մեր օրերուն ծառայից վիճակը : Սա-
կայն դժնդակ վիճակ մըն է աս թէ
տան , թէ տղոց , և թէ նոյն իսկ ծա-
ռայից համար : Ս ան զի ծառայք ան-
դադար և յաճախ փոփոխութեամբ
կ'աւրուին . գերդաստանէ գերդաստան
անցնելով՝ ամենեւին գերդաստան չեն
ունենար . կնիկ կ'աւնուն և մէկմէկէ
կը բաժնուին , որպէս զի կարենան զա-
նազան տանց մէջ ծառայել . և իրենց
տերանցը տաղտկալի չըլլալու համար՝
որդիքներն ալ կը հեռացնեն իրենցմէ :
Ս ր օրերուն ծառայք , երբոր ճարպիկ
ու խելացի ըլլան , գլխաւոր նպատակ-
նին կ'ըլլայ՝ որչափ որ կարելի է շուտ
ստակ դիզել , և ծառայութենէ քա-
շուելով՝ իրենց յատուկ տուն մը ձեւա-
ցնել . որն որ ըստ ինքեան գովելի փա-
փաք մըն է , բայց շատ անգամ տերանց
ծանր կը նստի :

Ուստի տանտիկնոջ պարտքը պիտի
ըլլայ՝ ծառային սիրտը իրեն ձգել վըս-
տահութիւն ցուցնելով վրան , քաղ-
ցրութիւն և գութ մը բանեցնել , և
հաստատուն՝ բայց միանգամայն նաև

անուշ կերպով մը անոր հաւատարմու-
թիւնը փորձել : Այս կերպս գործա-
ծելու որ ըլլայ , մեծապէս օգուտ կ'ընէ
տնական խաղաղութեանը , էրկանը ան-
գորրութեան , տղայոց անմեղութեա-
նը , և նոյն իսկ ծառայից բարուց լա-
ւութեանը , որ իր գլխաւոր պարտքե-
րէն մէկը պիտի ըլլայ : Այս կերպը՝
հին նահապետական պարզութիւնը յի-
շեցնել կու տայ , յորում գերդաստանի
մը հայրն ու մայրը՝ զծառայս իբրեւ ի-
րենց որդիքը կը սեպեն , անոնց կրօ-
նական և բարոյական դաստիարակու-
թիւն կու տային , և նիւթական կեան-
քերնին ալ լաւցնելու դիտմամբ՝ ծե-
րութեան օրերնուն մէջ վայելելու հա-
մար՝ կտոր մը երկիր ալ կու տային :
Այս կերպով՝ հին ժամանակաց ծա-
ռայքը մեր օրերուն ալ կրնան տեսնուիլ .
այնպիսի ծառայք՝ որ տնէն չեն բաժ-
նուիր , ու ցեղէ ցեղ անցնելով՝ կ'որբեն
անոնց որդիքը , որոնց հարցը ծառայու-
թիւն ըրեր էին :

Ինչուան հիմա զրուցած խօսքերով
յայտնի տեսնուեցաւ թէ տնտեսու-
թիւնը՝ կնիկ մարդու համար գեղեցիկ
և մեծ զբաղմունք մըն է : Սակայն չենք
ուզեր ըսել թէ իր ամէն փոյթն ու հո-
գը միայն այս բանին վրայ պիտի բո-
վանդակին : Թող տնտեսութիւնը իրեն
պարտք կամ հաճոյք մը սեպէ . բաւա-
կան է որ այս հաճոյքը չափազանցու-
թեան չերթայ . տանը տիկինն ըլլայ՝
չէ թէ աղախինը . չէ թէ միայն էրիկ
մարդուն տնարարը պիտի ըլլայ , այլ
նաև անոր ընկերը : Արիկ մարդը օ-
րուան աշխատանքէն յոգնած ու ձան-
ձրացած՝ տուն կու գայ , քիչ մը մտքի
հանդարտութիւն գտնելու համար .
ուստի հարկ է որ ոչ միայն տանը մէջ
ներքին կարգաւորութիւն և զարդա-
րանք տեսնէ , այլ նաև զարդարուած
սիրտ մը : Անիկ մարդը ամենեւին մտքէն
պիտի չհանէ թէ ինքն է գերդաստա-
նին ուրախութիւնը , մխիթարութիւնը
և հանգիստը : Այսով կ'իմացուի թէ
կնկան պարտքերէն մէկն ալ էրիկ մար-
դուն հաճոյ ըլլալն է : Այս կատարե-

լուծիւնս՝ որչափ ալ ունեցողին առջև զարմանալի բան մը չերենայ, սակայն մեծ է ուրիշներուն վրայ ազդած երջանկութեանը պատճառաւ։ Ղառնին կենաց մէջ մտերմութիւն աղգողը՝ գրել խաւորաբար սրտի կրթութիւնն է։ Իսկայն նոյն իսկ մտերմութիւնը՝ որ այնչափ բերկրաւոր է, ինքն ալ իր ցամաքութեան և թուլութեան ատեններն ունի։ Ինչն մեծ զգացմունք, հոգեւորականներն ալ, իրենց ցամաքութեան ժամանակն ունին։ Եւ առաւել մարդկային զգածմունք։ Իսկ չենք ուզեր ըսել կամ պահանջել՝ որ կնիկ մարդը բնութեան իրեն տուածէն աւելի հանձար ջանայ երեցընել, այլ թէ բնութեան տուածը մշակելու և գործածելու ետեւէ ըլլայ։

Երկրի մարդը զիսոյն մէջ ըսինք թէ երիկ մարդը պիտի ըլլայ կնկան դաստիարակը, և նախնական կրթութեամբ առած սկզբանցը աւելի ոյժ և հաստատութիւն տուող։ Սակայն կնկանն ալ պարտքն է՝ երկանը դաստիարակութեան խնամք ունենալ։ Իր ջանքը պիտի ըլլայ՝ երբեմն երբեմն անոր բարուց մէջ երեցած դաժանութիւնը անհետ ընել, ցած ու հասարակ մարդկանց վրայ տեսնուած սովորութիւններէն ետ կեցընել, իրեն կերպերուն ազնուակալութիւն մը տալ, և կրթութեամբ մարդոց կենցաղավարութեանը արժանի երեցընել զինքը։ Դռանց միշտ այսպիսի անհատասարութիւն մը են թաղերէլու երկան և կնիկ մարդու դաստիարակութեան մէջ, չկրնար գտնուիլ անանկ մարդ մը, որչափ ալ կիրթ միտք և աստիճանի ունենայ, որ զգածմանց փափկութեան նկատմամբ՝ կնկանէն սորվելու բան չունենայ։

Սակայն աւելի բարձր և աւելի դժուարին առաքինութեանց վրայ խօսքերնիս դարձնենք։ Այսպէս և երիկ մարդուն ձեռքն է գերդաստանին գրել խաւոր տեսչութիւնը և արտաքին գործոց նկատմամբ բացարձակ իշխանութիւնը, սակայն ասով ըսել չէ թէ կնիկ մարդը բոլորովին զրկուած պիտի մնայ

երկանը գործունեայ կենաց կցորդ ըլլալէն։ Ինքն ալ պարտական է որ անոր գործքերը ճանչնայ, իմանայ և սէր ունենայ անոնց վրայ։ Կէտք է որ ինքն ալ իր կարծիքը զրուցէ, և հարկ եղած տեղը խրատէ, քաջալերէ կամ զգուշացնէ։ «Հարս մը, կ'ըսէ Ալեմիզա տիկինը, հասարակաց գործողութեան մը զբաղած երկանը կենցաղավարութեան հաճոյքն պիտի ըլլայ։ Կրնայ ինքն ալ անոր կարծեացը վրայ ազդեցութիւն ունենալ՝ եթէ երիկը խորհրդարանի անդամ է։ անոր գրուածոցը վրայ՝ եթէ մատենագիր է։ անոր քուէին վրայ՝ եթէ քաղաքացի է։ Պէտք է որ մասնակից ըլլայ անոր խորհրդոցը զոր ունի՝ ձեռքն ունեցած արուեստին կամ գիտութեան յառաջագիմութեանը նըկատմամբ»։

Սակայն երիկ մարդը՝ ամենէն աւելի իր կնոջը խնամոց և հոգերուն այն ատեն կարօտութիւն ունի՝ եթէ իր ընթացիցը առջև արգելքներ և վտանգներ ելլեն։ Իրաւ է որ երիկ մարդը ոյժ մը ունի՝ որով կը մտածէ ու ի գործ կը դնէ։ Բայց իր գլխաւոր պակասութիւնքն ալ ունի։ Ինչպիսիքութիւնը՝ զինքը կարգէ դուրս կը դառնացընէ ու կը տաքնապէ։ Ինչի ձախորդութեամբ մը կարծես թէ ամէն բան կը կորսնցընէ, և մէկ անիրաւութեւ համար՝ բոլոր աշխարհք կ'ուզէ տակնուվրայ ընել։ Կնիկը, որ աւելի աշխոյժ է, և որուն տպաւորութիւնքը աւելի եռանդնալից են, շատ աւելի դիւրութեամբ սովորական ճամբան կը դառնայ, և իր երկանը վրայ սէր ալ եթէ չունենայ, սակայն անանկ կարողութիւն մը ունի՝ որ կ'օգնէ ու կը խրախուսէ։ և մեծ նեղութեանց մէջ աւելի կը յայտնուի իր այս կարողութիւնը։

Իսկայն կրելու և համբերելու կարողութիւնը սեպհական չէ կնկան։ Ունի նաև մխիթարելու և քաջալերելու ոյժն ալ։ Ինչութիւնը՝ որ արտասոււայ ձիւքը տուած է իրեն, մխիթարութեւ պարգեն ալ շնորհած է միանգամայն։ Կարողութիւն մը ունի կնիկ մարդը՝

ուրախութեան ծիծաղ երեցընելու այն մարդուն շրթանքը վրայ, որուն սիրտը նեղութեամբ կտոր կտոր եղած է. անոր կորսնցուցած խաղաղութիւնը կարծես թէ նորէն կը շնորհէ, ու ինքը վերք մը առնելով՝ ձեռքէն եկածին չափ կը ջանայ դիմացինին վերայ ցաւը քաղցրացընել կամ բոլորովին բժշկել:

Երբոր հրիկ մարդը՝ ինքզինքը իր կրիցը ձեռք մատնելով, գերդաստանին բարօրութիւնը վտանգի մէջ կը դնէ, կնկան պարտքը պիտի ըլլայ ճամբու բերել զինքը այն անուշ՝ բայց միանգամայն զօրաւոր զէնքերով, զոր բնութիւնը անոր ձեռքը տուած է: Տարակոյս չկայ որ դիւրին գործ մը չէ ասիկայ, և շատ կանայք՝ յաջողիլ ուզած ատեննին ալ յուսահատելով ետ կեցած են: Այսին զի իրաւի մեծ պատրանք մըն է անոր համար՝ որ մարդկային սրտի ապաւանութիւնը չգիտեր, և իր անմեղութեամբ՝ հազիւ կրնայ հաւտալ թէ աստք կան, ու նոյն աստից տէր գտնէ զանիկայ՝ որուն հնազանդութիւն և մեծարանք պարտրկան է. և յուսահատութեան մէջ կը սկսի իյնալ՝ քանի որ կը ստիպուի խոստովանիլ թէ անիկայ զոր ինքը պատուելու ստիպուած է, ուրիշներուն արհամարհանացը արժանաւոր է: Ասիկայ պատերազմ մըն է ասիկայ. սրտի և պարտուց պատերազմ մը՝ զորս հարկ է իրարու հետ միաբանել: Երբոր այս լքման դէմը չկարենայ առնուլ, ալ այնուհետեւ թէ իրեն, թէ էրկանը և թէ բովանդակ գերդաստանին բարօրութիւնը կորսուած է:

Բայց դժուարաւ կը պատահի որ կը նիկ մարդը մէկէն լքանի, ու բոլորովին կորսնցընէ իր յոյսը՝ կարգն ու բարօրութիւնը նորէն խթելու գերդաստանին մէջ: Իր եռանդուն բնաւորութիւնը՝ որչափ որ շուտով կը տկարանայ, այնչափ ալ շուտով սիրտ կ'առնու. այլ իր ջանիցը անյաջողութիւնն է բոլորովին զինքը վհատեցընողը: Ասիկայն այն ատենն ալ պէտք չէ որ լքանի: Իր ձեռքը զօրաւոր զէնքեր են համբերութիւնը, խանդաղատանքը, արտասուք և

լուութիւն, զորս ատենին պիտի գործածէ. և երանի իրեն ու երանի գերդաստանին թէ որ անձին զոհերովը՝ կարենայ աղիտալից չարի մը զօրանալը խափանել:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ

ԱԶԳԱՅԻՆ

Մուրատեան վարժարանին երկրորդ ետամսայ միտարաց քախուսը:

Մուրատեան վարժարանը ամենայն իրաւամբք իբր ազգային տօնախմբութիւն մը ամէն տարի մեծահանգէս կը կատարէ իր բարեյիշատակ Հիմնադրին՝ Պարոն Սամուէլ Սկրտիչ Մուրատայ տարեդարձը. որովհետեւ ազգային բարերարութեանց գլխաւորներէն մէկն է այնպիսի մեծախորհուրդ մտածութիւն մը՝ յորում միայն հիմնած է ազգին վերանորոգութեան յոյսը: Այն որ ասանկ կը մտածեն ամենայն գիտութեամբք ու իշխանութեամբք ծաղկած ազգեր բարեկարգ վարժարանաց վրայ, որչափ ևս առաւել մենք: Բայց այս տարի աւելի հանդիսաւոր կերպով կատարուեցաւ այս տարեդարձը. որովհետեւ ուսումնական տարւոյն երկրորդ ետամսայ միտարաց բաշխումն ալ նոյն օրը եղաւ: Այս դպրոցական հանգէսը ուղեցին մեծարել ազգային ու գաղղիացի նշանաւոր անձինք, որոնք որ մեծ ու անխաբելի ակնկալութիւն ունին մանկութեան ուղիղ դաստիարակութենէն:

Բազմավիպին ընթերցողք գիտեն՝ թէ աշակերտաց բարեխաւութիւնը յառաջացընելու համար հաստատուեցաւ՝ որ ամէն իրեք ամիսը հեղ մը միտալ բաշխուի տղայոց ըստ իւրաքանչիւր արժանաւորութեան: Այս հանգէսը այս տարի երկրորդ անգամ կատարուեցաւ ապրիլի 20^{ին}. ու յայտնի երեցաւ՝ որ վերակացուաց յոյսը անհիմն չէր, ու ըստ բաւականին փափաքնին՝ ի գլուխ ելաւ. որովհետեւ նոր նախանձաւորու-